Հովն ընկավ, հովն ընկավ

Կանաչել են արտերը,
Հովն ընկավ, հովն ընկավ,
Թազացել են դարդերը,
Հոգիս Սաթոյի քովն ընկավ:

Ախ, հովն ընկավ, հովն ընկավ,
Մեր սարերին զովն ընկավ,
Քու սերն էլ իմ սիրտն ընկավ:

Ծաղիկ ունիմ, դեղին է,
Հովին է, հովին է,
Իմ յարը ձեր գեղին է,
Հոգիս Սաթոյի քովին է:

Ա՜խ, հովին է, հովին է,
Մեր սարերի զովին է,
Քու սերն էլ իմ քովին է:

Սիրե, քու յարը սիրե,
Հովն ընկավ, հովն ընկավ,
Ամանաթ յար մի սիրե,
Հոգիս Սաթոյի քովն ընկավ:

Ախ, հովն ընկավ, հովն ընկավ,
Մեր սարերին զովն ընկավ,
Քու սերն էլ իմ սիրտն ընկավ:

Էս գիշեր լուսը տեսա,
Հովին է, հովին է,
Ծարավ էի, ջուր տեսա,
Հոգիս Սաթոյի քովին է:

Ա՜խ, հովին է, հովին է,
Մեր սարերի զովին է,
Քու սերն էլ իմ քովին է:

Գութանը հաց եմ տարե,
Հովն ընկավ, հովն ընկավ,
Բերանը բաց եմ տարե,
Հոգիս Սաթոյի քովն ընկավ:

Ախ, հովն ընկավ, հովն ընկավ,
Մեր սարերին զովն ընկավ,
Քու սերն էլ իմ սիրտն ընկավ: